ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.04.2013թ.
198-ի 6

ՀՀ պաշտպանության նախարար
պարոն Սեյրան Օհանյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Օհանյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 2013թ.-ի հունվարի 26-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը եւ խնդրել է տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ստացե՞լ են արդյոք պարգեւատրումներ (պարգեւավճարներ, նվերներ) ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցները 2012թ.-ին,
2. Եթե այո, ապա ըստ հաստիքների ովքե՞ր են պարգեւատրվել եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով),
3. Որքա՞ն է կազմել պաշտպանության նախարարության աշխատակիցների ստացած դրամական պարգեւատրումների ընդհանուր գումարը,
4. Ընդհանուր քանի՞ աշխատակից է պարգեւատրում ստացել:

Նախարարությունը ԻԱԿ-ի հարցմանը տրամադրել է թերի պատասխան: Պատասխանը համարվել է թերի, քանի որ նախարարությունը չի հայտնել, թե ըստ հաստիքների ովքե՞ր են պարգեւատրվել եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով), որքա՞ն է կազմել պաշտպանության նախարարության աշխատակիցների ստացած դրամական պարգեւատրումների ընդհանուր գումարը եւ ընդհանուր քանի՞ աշխատակից է պարգեւատրում ստացել՝ 2-րդ, 3-րդ եւ 4-րդ հարցերի պատասխանը: Նշենք, որ ԻԱԿ-ը խնդրել է նախարարության աշխատակիցների ստացած պարգևատրումների չափի մասին տեղեկություններ ըստ հաստիքների, այլ ոչ անվանական:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել բաց թողնված վերոնշյալ տեղեկությունները (հարցման 2-րդ 3-րդ եւ 4-րդ հարցերի պատասխանը):

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան